## ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*2014 թ. դեկտեմբերի 6-ին, 77 տարեկան հասակում վախճանվեց անվանի պատմաբան, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագրության ամբիոնի վարիչ, «Էրեբունի», «Սարդարապատ» թանգարանների, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն, ԽՍՀՄ և ՀՀ պետական մրցանակների դափնեկիր, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Աշոտի Բարսեղյանը:*

*Ծնվել է 1937 թ. հունվարի 7-ին, Երևանում: 1959 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը, վարել է պետական մի շարք կարևոր պաշտոններ: 1968-1972 թվականներին ղեկավարել է Էրեբունի ամրոցի, Գառնիի տաճարի, Դսեղում Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի վերականգման և վերակազմավորման աշխատանքները: 1973-1978 թթ. եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության մշակութալուսավորչական հիմնարկների վարչության պետ, 1978-1985թթ. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի, 1984-1985թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն:*

*Լ. Բարսեղյանը 1988-1991 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Պատմության և մշակույթի հուշարձանների գլխավոր վարչությունը: 1992-1995 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահի ընդհանուր հարցերի գծով տեղակալը:*

*Պատմաբանը Հայաստանի մի շարք թանգարանների գիտական ցուցադրությունների հեղինակ է: Նրա աշխատությունները վերաբերում են հայ*

*ժողովրդի ծագման ու կազմավորման հիմնահարցերին և դրանց նվիրված պատմագիտական ու աղբյուրագիտական հետազոտությունների ամբողջական քննությանը, Հայկական լեռնաշխարհում երկրաշարժերի վերաբերյալ մատենագրական վկայությունների լուսաբանմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման բազմազան խնդիրներին:*

*1974 թ. լույս է տեսել Լ. Բարսեղյանի «Հայ ժողովուրդի ծագման և կազմավորման պրոբլեմը հայագիտության մեջ» խորագրով աշխատությունը, 1995 թ. հրատարակվել է «Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի մասին», 2001 թ.՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը», «Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը» ուսումնասիրությունները:*

*Լ. Բարսեղյանը մշտապես ցուցաբերել է հասարակական բարձր ակտիվություն, զբաղեցրել հասարակական կարևոր պաշտոններ: 1998 թվականից եղել է Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային կազմակերպության նախագահության անդամ, 2003 թվականից «Ազգային անվտանգության հիմնախնդիրների համահայկական ակադեմիա» հասարակական կազմակերպության նախագահ:*

*Անուրանալի են Լ. Բարսեղյանի ջանքերն ու ծառայությունները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում: Այդ նպատակով նա այցելել է բազմաթիվ երկրներ՝ սերտորեն համագործակցելով օտարազգի հեղինակավոր ցեղասպանագետ-գիտնականների հետ:*

*Հասարակական-քաղաքական, գիտական ու մանկավարժական ակնառու ծառայությունների համար մեծանուն գիտնականը արժանացել է մեդալների ու պատվոգրերի: 2002 թ. պարգևատրվել է «Ֆրիտյոֆ Նանսեն» միջազգային հիմնադրամի ոսկե հուշամեդալով, 2003 թ. նրան շնորհվել է ՀՀ պետական բարձրագույն պարգևներից մեկը՝ Մ. Խորենացու անվան մեդալ:*

*Մեծ հայրենասերի և արժանապատիվ հայորդու անմոռանալի կերպարը կմնա երախտագետ սերունդների հիշողության մեջ:*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
**Պատմական գիտությունների թեկնածու**